ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ... ԱՍՏՎԱԾ

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԴԱՆԻԵԼ 6:3-6

*3 Այն ժամանակ այս Դանիելը վերակացուներից և սատրապներից ավելի անվանի դարձավ, որովհետև նրա մեջ **գերազանց հոգի կար**, և թագավորը մտածում էր նրան ամբողջ թագավորության վրա կարգելու մասին:*

*4 Այն ժամանակ վերակացուներն ու սատրապներն աշխատում էին Դանիելի դեմ՝ կառավարման մեջ մի պատրվակ գտնելու, բայց ոչ մի պատճառ ու չարություն չկարողացան գտնել, **որովհետև նա հավատարիմ էր**, և ոչ մի հանցանք ու չար բան չգտնվեց նրա վրա:*

5 Այն ժամանակ այս մարդիկ ասացին. Մենք Դանիելի դեմ մի պատրվակ անգամ չենք գտնի, բացի եթե նրա դեմ մի բան գտնենք իր Աստծու օրենքից:

6 Այն ժամանակ վերակացուները ու սատրապները հավաքվեցին թագավորի մոտ և այսպես ասացին նրան.

1. ԴԱՆԻԵԼԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Նրա մեջ գերազանց հոգի կար

Նա հավատարիմ էր

Եվ Դանիելն ինքն է Աստծուն գոհություն հայտնում իրեն տրված իմաստության ու զորության համար (Դանիել 2:23):

- *Գործք 6:3-5-ում առաքյալները ծառայության պատասխանատվությունը վստահեցին բարի համբավ ունեցող, Սուրբ Հոգով և իմաստությամբ լի մարդկանց: Այս սկզբունքը հիմք դարձավ նաև հաջորդ սերունդների ծառայողների համար:*

  3 Եղբայրնե՛ր, ընտրե՛ք ձեր միջից բարի համբավ ունեցող, Սուրբ Հոգով և իմաստությամբ լի յոթ հոգու... 5 ընտրեցին Ստեփանոսին, որ Սուրբ Հոգով ու հավատով լցված մարդ էր... (Գործք Առաքելոց 6:3-5)

  Ահա թե ինչու Հիսուսն Իր առակում հավատարիմ ծառային ուղղված այս խոսքերն ասաց՝ «Ապրե՛ս, բարի՛ և հավատարի՛մ ծառա» (Մատթեոս 25:21, 23):

  Հիշե՛ք, որ հավատարմությունը Սուրբ Հոգու պտուղն է հավատացյալի կյանքում: Այն ձևավորվում և աճում է դժվարությունների ու նեղությունների մեջ:

  *10 Երբ Դանիելն իմացավ, որ հրովարտակը ստորագրվել էր, գնաց իր տունը. նրա վերնատան պատուհանները բաց էին **դեպի Երուսաղեմ**: Նա օրը երեք անգամ ծնրադրում էր, աղոթում և **գոհաբանություն էր** հայտնում իր Աստծուն, **ինչպես նախապես անում էր**:*

- *Ինչո՞ւ էին Դանիելի պատուհանները բաց դեպի Երուսաղեմ*

- *Այդ քաղաքը դեռ ավերակների մեջ էր: Բայց Դանիելը գիտեր, թե Աստված ինչ էր խոստացել Իր ժողովրդին:* ***«Երբ լրանա Բաբելոնի համար յոթանասուն տարին, ես կայցելեմ ձեզ... որպեսզի ձեզ վերադարձնեմ այստեղ...*** *(Երեմիա 29:10):*

- ***Դանիելն*** *մոտ տասնհինգ տարեկան էր, երբ Ք. ա. մոտ 605 թվականին Բաբելոն տարվեց:*

  Այսինքն՝ մոտ վաթսունհինգ տարի էր անցել այն օրվանից, երբ պատանի Դանիելը որոշեց հավատարիմ մնալ Աստծուն (Դանիել 1:8), մինչև այն օրը, երբ տարեց Դանիելը ծնրադրեց իր պատուհանի առաջ (Դանիել 6:10):

  10 Որովհետև այսպես է ասում Տերը. «Երբ լրանա Բաբելոնի համար յոթանասուն տարին, ես կայցելեմ ձեզ և կկատարեմ ձեզ համար իմ բարի խոսքը, որպեսզի ձեզ վերադարձնեմ այստեղ: 11 ***Որովհետև ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդներ և ոչ թե չարիքի, որպեսզի ձեզ ապագա և հույս տամ:*** *12 Դուք կկանչեք ինձ և կգաք ու կաղոթեք ինձ, և ես կլսեմ ձեզ: 13 Դուք կփնտրեք ինձ ու կգտնեք, երբ ինձ ձեր ամբողջ սրտով կորոնեք: 14 Եվ ես կգտնվեմ ձեզ համար,- ասում է Տերը,- կվերադարձնեմ ձեր գերությունից և կհավաքեմ ձեզ բոլոր ազգերից ու բոլոր տեղերից, ուր որ*

աքսորել էի ձեզ,- ասում է Տերը,- և ես ձեզ կվերադարձնեմ այն տեղը, որտեղից ձեզ տարագրել էի (Երեմիա 29:10-14):

2. ԴԱՆԻԵԼԸ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԷՐ, ՈՐ ՀՈԳԱՒՈՐ ՊԱՅՔԱՐՆ ՈՒՂՂՎԱԾ ԷՐ ԻՐ ԱՂՈԹՔԻ ԴԵՄ

5 Այն ժամանակ այս մարդիկ ասացին. Մենք Դանիելի դեմ մի պատրվակ անգամ չենք գտնի, բացի եթե նրա դեմ մի բան գտնենք իր Աստծու օրենքից: 7 ....Թագավորը մի հրաման արձակի, և արգելանք պարտադրվի, որ ոչ ոք, քեզնից բացի, ո՛վ թագավոր, երեսուն օր ոչինչ չխնդրի որևէ աստծուց կամ մարդուց, այլապես նա առյուծների գուբը գցվի:

«Ինչպես նախապես անում էր»

Ուշադրությո՛ւն դարձրեք, թե Սուրբ Գրքում ինչպես է կրկնվում այս պահը: Ի՞նչ են անում Աստծու մարդիկ, երբ լուր են ստանում:

***Երբ Դանիելն իմացավ**, որ հրովարտակը ստորագրվել էր, գնաց տուն և աղոթեց (Դանիել 6:10–11):*

***Երբ Եզեկիան կարդաց** սպառնալիքներով լի նամակը, գնաց Տիրոջ տուն, նամակը փռեց Տիրոջ առաջ և աղոթեց (Դ Թագավորներ 19:14–19, Եսայիա 37:14–20):*

***Երբ Նեեմիան լսեց**, որ Երուսաղեմի պարիսպները քանդված էին, լաց եղավ, ծոմ պահեց և աղոթեց (Նեեմիա 1:3–11):*

***Երբ հավատացյալները լսեցին**, թե իշխանավորներն ինչ էին ասել Պետրոսին ու Հովհաննեսին, միասին իրենց ձայնը բարձրացրին առ Աստված և խնդրեցին, որ Նա համարձակություն տա Իր խոսքը հռչակելու համար (Գործք 4:23–31):*

***16** Այդ ժամանակ թագավորը հրամայեց, և բերեցին Դանիելին ու նրան գցեցին առյուծների գուբը: Թագավորն ասաց Դանիելին. Քո Աստվածը, որին դու անդադար պաշտում ես, թող ազատի քեզ: **17** Եվ մի քար բերեցին ու դրեցին գբի բերանին. թագավորն այն կնքեց իր կնիքով և իր մեծամեծների կնիքներով, որպեսզի Դանիելի նկատմամբ ոչինչ չփոխվի: **18** Հետո թագավորը գնաց իր պալատը և գիշերն անցկացրեց ծոմապահությամբ. նվագարաններ բերել չտվեց իր առաջ, և քունը փախավ նրանից:*

- *Երբ կարդում եմ այս հատվածը, հիշում եմ Հիսուսի մահը: Նրան դրեցին գերեզմանի մեջ, մեծ քար գլորեցին մուտքի առաջ, ապա քարը կնքեցին ու պահակներ դրեցին:*

- *Եվ ես պատկերացնում եմ այդ լռությունը, **ասես ամբողջ երկինքը լռել էր**: Աշակերտների համար դեռ ուրբաթ օրվա ցավն էր: Իսկ Հայրը գիտեր այն, ինչ նրանք դեռ չէին*

տեսնում: Խաչը Աստծու փրկության ծրագրի մեջ էր, և նույն Աստվածը հարություն տվեց Իր Որդուն (Գործք 2:23-24):

***19** Ապա թագավորն արշալույսին կանուխ վեր կացավ և շտապ գնաց առյուծների գուբը. **20** երբ գբին մոտեցավ, տրտմագին ձայնով կանչեց Դանիելին: Թագավորը խոսեց և ասաց Դանիելին. «Ո՛վ Դանիել, կենդանի Աստծու ծառա՛, քո Աստվածը, որին անդադար պաշտում ես դու, կարողացա՞վ քեզ ազատել առյուծներից»:*

- *Այն ժամանակ, երբ կանայք լուսաբացին մոտեցան գերեզմանին, հրեշտակը նրանց ասաց՝ «Նա այստեղ չէ, որովհետև հարություն առավ» (Մատթեոս 28:6):*

***21** Այն ժամանակ Դանիելը խոսեց թագավորի հետ. Ո՛վ թագավոր, հավիտյա՛ն ապրիր: **22** Իմ Աստվածն ուղարկեց իր հրեշտակին, և նա փակեց առյուծների բերանը, ու նրանք ինձ չվնասեցին, որովհետև նրա առաջ ես անմեղ գտնվեցի: Քո առաջ ևս, ո՛վ թագավոր, ոչ մի հանցանք չեմ գործել: **23** Այդ ժամանակ թագավորը շատ ուրախացավ և հրամայեց, որ Դանիելին դուրս բերեն գբից: Եվ նրա վրա ոչ մի վնասվածք չգտնվեց, որովհետև վստահել էր իր Աստծուն:*

Որովհետև ՆՐԱ ԱՌԱՋ ես անմեղ գտնվեցի:
ՔՈ ԱՌԱՋ ևս, ո՛վ թագավոր, ոչ մի հանցանք չեմ գործել:

- *Պողոսն էլ այս երկու կողմերի մասին է խոսում, երբ ասում է, որ ջանում է մաքուր խիղճ ունենալ <u>Աստծու և մարդկանց առաջ</u> (Գործք 24:16)։*

  Եկեղեցի՛, Աստծու հետ առանձին անցկացրած ժամանակը պետք է երևա մարդկանց հետ մեր ապրելու ձևի մեջ։

  Աստված մեզ ընտանիքի, եկեղեցու և աշխատավայրի մարդկանց հետ է կապում։ Այդ հարաբերություններում է երևում մեր ազնվությունը և գործնական ձև ստանում մեր սերը։

- *Տեսե՛ք, թե ինչ եղավ, երբ Դանիելին գբից դուրս բերեցին։*

  Աստված ազատեց նրան։

  Աստված վերականգնեց նրան։

  Աստված ճանաչելի դարձրեց Իր անունը։ *Գլխի սկզբում պաշտոնյաները հրովարտակ էին պահանջում, որով կարգելվեր աղոթել Աստծուն։ Գլխի վերջում Դարեհն ինքն է բոլոր ժողովուրդներին, ազգերին ու լեզուներին հռչակում, որ Դանիելի Աստվածը կենդանի է, Նրա թագավորությունը հավիտյան է, և **Նա է ազատում ու փրկում** (**համարներ 25–27**)։*

- *Քսանչորսերորդ համարը պատմում է մեղադրողների ու նրանց ընտանիքների նկատմամբ թագավորի խիստ դատաստանի մասին:*

  *Մեր կյանքում **Հռոմեացիներ 12:19–21**-ը մեզ հորդորում է վրեժն Աստծուն թողնել և բարով հաղթել չարին:*

- *Իսկ **Եբրայեցիներ 11:33–38**-ը հիշում է և՛ նրանց, ովքեր փակեցին առյուծների բերանները, և՛ նրանց, ովքեր հավատքով դիմացան տառապանքին: Երկու դեպքում էլ հավատքով ապրել նշանակում է կյանքդ վստահել Աստծուն:*

  Երբ Աստված քեզ ավելի մեծ պատասխանատվություն է տալիս, հավատարի՛մ եղիր վստահվածիդ մեջ:

  Երբ հակառակության ես հանդիպում, դիմի՛ր Աստծուն և շարունակի՛ր աղոթել:

  Երբ Աստված քեզ անցկացնում է փորձության միջով, պատմի՛ր մարդկանց, թե Նա ինչ արեց:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ